ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Ավետման տոնի «Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ» հրեշտակաձայն ավետիսով ողջունում ենք բոլոր մայրերին և մայրության բերկրանքին սպասող կանանց՝ սրտագին շնորհավորելով Մայրության ու գեղեցկության օրվա կապակցությամբ:

Բազմադարյա մեր պատմության մեջ հոգևոր, բարոյական և ազգային արժեքներ հաստատելու բացառիկ առաքելություն են իրականացրել հայ կանայք և մայրական գթառատ սրտի ջերմությամբ լցրել հայ կյանքը՝ Սուրբ Մարիամ Աստվածածնին ունենալով որպես ներշնչող օրինակ: Մայրական կոչումն ու առաքելությունն անպարագրելի է ընտանեկան հարկից ներս, քանզի, ինչպես ճշմարտորեն ասված է՝ «մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը»:

Սիրելիներ, տոնական այս օրը Հայրապետիս աղոթքն ու բարի մաղթանքն է, որ Սուրբ Մարիամ Աստվածածնի ու մերազնյա բոլոր սրբուհիների բարեխոսությամբ Աստվածային օրհնությունը միշտ օգնական լինի ու զորացնի Ձեզ, պարգևի երջանկություն, քաջառողջ կենաց հուսառատ ու բերկրալի բազում օրեր:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ամենեսեան. ամէն»:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 ապրիլի 2003 թ.